ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ*

DOI:10.57155/EFQM2614

ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱԿՎԵՑԻ

Բանալի բառեր՝ *Ս. Թադեոսի (Թադեի) վանք, Հակոբ Դ Ջուղայեցի, Իսահակ վարդապետ Մակվեցի, Արտազ, Կառնուտի ջրատար, Սարգիս վարդապետ Կաֆայեցի։*

Արտազի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Մակվեցու (1650–1664) հրաժարականից հետո Ամենայն Հայոց Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը (1655–1680) կոնդակով դիմեց Գանդիմանի և Ջղախոռի բնակիչներին՝ առաջարկելով Իսահակ վարդապետ Մակվեցու նշանակումը Արտազի թեմի Թադեի վանքի առաջնորդի պաշտոնում[1]։ Կոնդակում ընդգծվում էր Իսահակի հեղինակությունը որպես վարդապետի, եպիսկոպոսի և հոգևոր առաջնորդի, որն իր հոտի հանդեպ աչքի էր ընկնում հոգածու վերաբերմունքով և ավանդական եկեղեցական կարգերին նվիրվածությամբ. «...զԻսահակ վարդապետն մեր, զի միշտ զձեզ խրատեսցէ եւ ուսուցանէ զբանն աստուածային եւ հովուեսցէ զձեզ ըստ հարցն աւանդութեան, զի դայ է ձեզ վարդապետ, եպիսկոպոս եւ առաջնորդ։ Ձեր ամենայն հասքն եւ իրաւունքն ի դա յանձնեցաք վերստին, որպէս որ յառաջն յանձնեալ էաք։ ...եթէ քահանայ, եթէ դօլվաթաւոր եւ եթէ ռամիկ, ով որ այլեւայլ արար Իսահակ վարդապետի խօսիցն, այնպիսին պատիժս եւ դառնութիւնս մեծ է կրելոց յինէն, եւ հնազանդքն աւրհնութիւնս եւ պարգեւս ընդունելոց են յինէն»[2]։ Այս կոնդակը ոչ միայն հաստատում էր Իսահակ վարդապետի պաշտոնական նշանակումը, այլև ընդգծում նրա՝ որպես հոգևոր առաջնորդի խոսքի և վարքի անառարկելի հեղինակությունը, որ պետք է ընկալվեր իբրև ուղեցույց բոլոր խավերի համար՝ քահանայից մինչև հասարակ ժողովուրդ։ Կոն-

---

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, բ.գ.թ., minasyan.tamara64mail.ru, հոդվածը ստանալու օրը՝ 3 սեպտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 15 սեպտեմբերի, 2025։

1 Աղբյուրները Թադեոս առաքյալի վանքում Իսահակ վարդապետ Մակվեցու առաջնորդության սկզբնավորման տարբեր թվականներ են նշում՝ 1663-1665 միջակայքում։ Սակայն պահպանվել է 1660 թվականի առուվաճառքի մի պայմանագիր, ըստ որի՝ մակվեցի Մուստաֆաբի որդի Դամուրը երեք թումանով վանքի առաջնորդ Սահակ վարդապետին է վաճառում իր բաժին հողը (**Յ. Թօփճեան,** *Յուցակ ժողովածուաց Դաւեան Խաչիկ վարդապետի*, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 13)։

2 *Դիւան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի. Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705 թթ.)*, մասն Ա, աշխատասիրեց՝ ***Խ. Տէր-Գրիգորեան***, Անթիլիաս, 2003, էջ 59։

դակում նաև հստակ սահմանվում են նրա խոսքի նկատմամբ անհնազանդության հետևանքները և հնազանդության դեպքում սպասվող օրհնությունները:

Իսահակ Մակվեցու երկարամյա ծառայությունը, բարոյական անբասիր վարքը և եկեղեցական սկզբունքներին անշեղ հավատարմությունը նրան արժանացրել են «Արդար» պատվանունին. «Տէր Իսահակ Մակուեցի մեծ եւ տիեզերալուս վարդապետ՝ կոչեցեալն Արդար ըստ վարուց եւ ըստ կենցաղավարութեան»[3]: Ժողովուրդը նրան ճանաչում էր որպես «մեծ եւ տիեզերալուս վարդապետ», որի խստապահանջ կենցաղավարությունը սերունդների համար օրինակ էր դարձրել:

Ո՞վ էր Իսահակ Մակվեցին, որի նկատմամբ Ամենայն Հայոց կաթողիկոսը խոր վստահություն ուներ: Ավելին, 1663 թվականի ապրիլի 30-ի կոնդակով նա Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքից անջատեց Գանդիմանի և Ջղախոռի շրջանները՝ հանձնելով դրանք Իսահակ վարդապետ Մակվեցու առաջնորդությանը[4]:

Իսահակ Մակվեցին ԺԷ դարի հայ եկեղեցու պատմության մեջ նշանավոր, սակայն համեմատաբար քիչ ուսումնասիրված գործիչներից է[5]: Նրա ծննդյան թվականը հայտնի չէ: Կարապետ եպիսկոպոս Ամատունին այն համարում է մոտավորապես 1630-ը՝ հիմնվելով 1699 թվականի Անանուն Վանեցու «Ժամանակագրության» տեղեկության վրա[6]: Ըստ այդ աղբյուրի՝ Իսահակը երկրորդ անգամ Վան այցելելիս արդեն ծերունի էր. «ՌՃԽԸ (1699) ի մուտն յունվարի, մեծ և անուանի, Արդար Իսահակ վարդապետն եկն ի Վան, որ էր այր ծերունի ե յոյժ առաքինի. և ամենայն ներքին և արտաքին գիտութեամբ ե փիլիսոփայական իմաստութեամբ զարդարեալ, և քաղաքացիքն յոյժ պատուով ե փափագանօք ընդունեցին զնա իբրև զլուսաւորիչն Հայոց, և յետ երեք ամսոյ մեծ պարգևօք առաքեցին զնա յաթոռն իւր ի Թադէոս Առաքելոյ վանս»[7]: Իսահակ Մակվեցին առաջին անգամ Վան է այցելել 1675 թվականին՝ նպատակ ունենալով պայքարել Սարգիս Կիպրացու տարածած աղանդավորական ուսմունքի դեմ[8], ինչը վկայում է դավանաբանական սկզբունքների պաշտպանության գործում նրա վճռական և անզիջում դիրքորոշման մասին:

---

3 *Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին*, կազմեց՝ ***Մ. վրդ. Քէշիշեան***, Վիեննա, 1964, էջ 615, 620:

4 **Յ. Քիւրտեան**, «Նիւթեր Յակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի կենսագրութեան համար (1655-1680)», *Հասկ*, ԻԱ, 1952, էջ 42-43:

5 **Կ. եպս. Ամատունի,** *ԺԷ դարու երեւելի վարդապետներ*, Վենետիկ, 1989, 81-84, **Ա. Հախնազարյան**, *Արտազի երեք վանքերը*, 2012, Երևան, էջ 90-91:

6 **Կ. եպս. Ամատունի**, «Սահակ վրդ. Մակուեցի», *Բազմավէպ*, 1983, էջ 98:

7 *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.*, հ. Բ, կազմեց՝ ***Վ. Հակոբյան***, 1956, Երևան, էջ 420:

8 Նույն տեղում, էջ 413:

Իսահակ վարդապետ Մակվեցու գործունեության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Ս. Թադեի վանքում գրված ձեռագրերի հիշատակարաններում, ինչպես նաև Հռոմի Հավատասփյուռի Ժողովին, Ուրբանյան վարժարանի ղեկավարությանը և Եվրոպայի հայ վաճառականներին ուղղված նրա նամակներում: Այս աղբյուրներում նա հանդես է գալիս որպես հոգևոր առաջնորդ, կրթական նախաձեռնություններ խթանող և հմուտ դիվանագետ: Որոշ ձեռագրերում Մակվեցին հանդես է գալիս նաև որպես գրիչ և պատվիրատու: Նամակները, որոնք պահպանվում են Վատիկանի Առաքելական արխիվում՝ հայերեն բնագրերով (Archivio della Propaganda Fide, Series SC, v.2–v.4, AP. Udienze 1680–1690, V.2, ք. 64), ինչպես նաև Վենետիկի մատենադարանի թ. 1458 ձեռագրում[9], հրապարակել է Կարապետ եպիսկոպոս Ամատունին՝ որպես հավելված իր 1983 թվականի հոդվածի[10]: Այդ նամակագրությունը կդիտարկվի առանձին ուսումնասիրության շրջանակում, իսկ ներկա վերլուծությունը հիմնվում է ձեռագրերի հիշատակարանների վրա:

1666 թվականին Իսահակ վարդապետ Մակվեցու նախաձեռնությամբ Հովսեփ վարդապետը ընդօրինակում է Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս երկնայնոցն քահանայապետության» երկը (Եղմ. 1074)[11]: Ձեռագիրը գրվել է «ի թագաւորութեանն պարսից Շահ Սուլէմանին եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ Կաթողիկոսի ամենայն Հայոց յԱթոռ Ս. Էջմիածնի»: Երկի հայերեն թարգմանությունը լատիներենից կատարել էր ԺԷ դարի նշանավոր աստվածաբան, փիլիսոփա և բանասեր Ստեփանոս Լեհացին:

Ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Իսահակ Մակվեցին կրթություն է ստացել Ս. Էջմիածնում՝ վայելելով Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի հովանավորությունը: Նա աշակերտել է ժամանակի ականավոր մանկավարժ, փիլիսոփա և քերական Սիմեոն վարդապետ Ջուղայեցի րաբունապետին՝ ստանալով իմաստասիրական, տրամաբանական և քերականական գիտելիքներ: Իսահակը գրում է. «Արդ, ես տրուպս յամենայնի նուաստ ոգի Իսահակ վարդապետս Մակուեցի՝ առաջնորդ վեհափառ աթոռոյն Սրբոյն Թադէոսի առաքելոյն, աշակերտեալ հոգեւոր ծնընդեան սրբազան տեառն Յակոբայ կաթողիկոսին ամենայն Հայոց, ներակրթեալ ըստ կարի ի հրահանգս վարժարանի Ս. Աթոռոյն, առ ոտս Սիմէօնի քաջ րաբունապետին»[12]: Հիշատակարանի շարունակությունը ներկայացնում է Սիմեոն Ջուղայեցու հեղինակած գործերի գնահատա-

---

9 **Բ. Սարգիսեան**, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին ի Վենետիկ*, հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 1241-1245:

10 **Կ. եպս. Ամատունի**, «Սահակ վրդ. Մակուեցի», *Բազմավէպ*, էջ 113-130:

11 **Ն. եպս. Պողարեան**, *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբեանց*, հ. Դ, ձեռ. 1074, Երուսաղէմ, 1969, էջ 109:

12 Նույն տեղում:

կանը։ Վերջինս հեղինակել է մի շարք ուսումնական դասագրքեր՝ «Հաւաքաբանութիւն», «Տրամաբանութիւն» և «Քերականութիւն ըստ լեզուիս հայկազեան», որոնք կարևոր դեր են խաղացել հայ դասական կրթության համակարգում։ Իսահակ Մակվեցին ընդգծում է, որ Սիմեոնը, օգտվելով այլալեզու աղբյուրներից («յայլոց ազգաց նիւթ առեալ»), ստեղծել է «լուսաշաւիղ եւ դիւրամուտ ներածութիւնս առ ամենայն իմաստասիրական հանճարս եւ գիտութիւնս»[13]։

1677 թվականին Իսահակ վարդապետ Մակվեցին հանդես է գալիս որպես գրիչ՝ ընդօրինակելով Ստեփանոս Լեհացու կազմած «Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք...» բառարանը[14], որը ներառում է 262 փիլիսոփայական, գեղագիտական և աստվածաբանական եզրերի բացատրություններ (ՄՄ 340)[15]։ Իսահակը բառարանը բնութագրում է որպես «բուրաստան իմաստասիրական»՝ ընդգծելով դրա՝ որպես ուսումնական և հոգևոր ձեռնարկի արժեքը։ Նա նշում է, որ մատյանը գրել է անձամբ՝ «գրեցաւ ձեռամբս իմով», և նվիրել է իր հոգևոր և մարմնավոր ծնողների հիշատակին։ Ձեռագրի նույն էջում պահպանվել է 1785 թվականի հիշատակարան, որը գրել է Իսահակ եպիսկոպոս Փառակեցին։ Նա 1783–1787 թվականներին Մակուի Ս. Թադեոսի առաջնորդն էր։ Հետաքրքիր է այն փաստը, որ մեկդարյա հեռավորությունից Իսահակ եպիսկոպոս Փառակեցին իրեն համարում է Իսահակ Մակվեցու արժանի հաջորդը՝ ընդգծելով հոգևոր ժառանգության շարունակականությունը և ներկայացնելով Ս. Թադեոսի վանքի հոգևոր և մշակութային ժառանգության երկու կարևոր փուլերը։ Իսահակ Փառակեցու հիշատակարանը գրված է «դառն եւ դժնտակ» ժամանակներում, երբ տեղի գյուղերը տուժել էին, իսկ վանքը ենթարկվել էր ավերման. «Վերոյգրեալ Իսահակ արդար յառաջնորդ լուսահոգի վարդապետին տեղն արժանուն աջորդ եղէ անարժան հող ու մոխիր Իսահակ եպիսկոպոս Փառակեցի ՌՄԼԱ -ին (1782) յոյժ դառն եւ դժնտակ ժամանակի, թողում զամենայն եւ բոր կպեցեալ գիւղս մեր էր ցաւ քան զամենայն։ Գ ամ է ջանամ, թէ հանեմ, անկար լինելոյս /// մնայ։ Ով ոք քակէ, ն/// շինօղ սրբոյ Աթոռ[ոյս]։ ՌՄԼԴ (1785) թուջն գրեցի» (ՄՄ 340, թ. 3ա)։

---

13 Նույն տեղում։

14 Ժէ դարի նշանավոր աստվածաբան, թարգմանիչ, բանասեր և փիլիսոփա Ստեփանոս Լեհացու (Լվովցի, Իլովացի) կարևորագույն երկերից է «Բանք իմաստասիրականք և աստուածաբանականք...» բառարանը, որը, սակայն, դեռևս հրատարակված չէ։ Գ. Գրիգորյանը, Լեհացու այս բառարանը դարձնելով առանձին ուսումնասիրության թեմա, ընդգծում է, որ այն աչքի է ընկնում իր բարձր գիտական մակարդակով և էապես տարբերվում է նախորդ բառարաններից՝ բառ-հասկացությունների բացատրությունների անհամեմատ ընդարձակությամբ, խորությամբ և բազմակողմանիությամբ (**Գ. Գրիգորյան,** «Ստեփանոս Լեհացու փիլիսոփայական բառարանը», *ՊԲՀ*, 1975, № 2, էջ 133-145)։

15 Տե՛ս նաև *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Բ, կազմեցին՝ ***Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան***, Երևան, 2004, էջ 95-98։

Երկու ձեռագիր մատյանների հիշատակարանները վկայում են, որ Իսահակ Մակվեցին եղել է դասական դպրության ավանդների կրող, բարձր կրթական աստիճան ունեցող հոգևորական։

1677 թվականին Իսահակ վարդապետը պատվիրում և ստանում է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը, որը որպես հիշատակ նվիրում է Ս. Թադեոսի վանքին։ Այդ մասին տեղեկանում ենք ձեռագրի հիշատակարանից. «Զստացող սորին՝ զԻսահակ վարդապետ, վերատեսուչ Թադէոսի առաքելոյ սուրբ Աթոռոյն, որ աւանդեաց զգիրքս՝ յիշատակ իւր ի դուռն Սուրբ Առաքելոյն... Ի թվականիս մերում ՌՃԻԶ (1677) գրեցաւ... ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլեմանի, եւ ի կողմն Հոռոմոց Սուլթան Մահմատին, որ էառ զԿիրան կղզի եւ զվէհաց զամուրն Կամէնէց, եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ կաթողիկոսի Ամենայն Հայոց» (ՄՄ 808, թ. 165բ, 489բ)[16]։ Մատյանը ընդօրինակվել է հենց Ս. Թադեոսի վանքում՝ Իսահակի անմիջական հովանու ներքո, իսկ ընդօրինակումը տեղի է ունեցել աշխարհաքաղաքական լարված ժամանակաշրջանում՝ Պարսից Սեֆյան Շահ Սուլեյմանի (1666–1694) և Օսմանյան Սուլթան Մեհմեդ IV-ի (1648–1687) իշխանության տարիներին։ Հիշատակարանում արձանագրված Կիրան կղզու և Կամենեց ամրոցի գրավումը վերաբերում է լեհ-օսմանական պատերազմի (1672–1699 թթ.) իրադարձություններին[17]։

Ձեռագիրն ունի նաև գեղարվեստական ձևավորում։ Խորանների, ճակատազարդերի, բուսական լուսանցազարդերի և հանգուցագիր զարդագրերի հեղինակը Մկրտիչն է, որը 6ա թերթի կիսախորանի մեջ թողած հիշատակարանում իրեն անվանում է նկարող. «Զսոսկ անուն Մկրտիչ նկարող խորանիս», իսկ անանուն գրիչը, որ իրեն կոչում է «զանպիտան գծողակս», խոնարհաբար խնդրում է հիշել իրեն (ՄՄ 808, թ. 165բ)։

Գրիչը, հանդես գալով Իսահակ վարդապետ Մակվեցու անունից, ձեռագրում թողել է ընդարձակ հիշատակարան՝ գրված գեղեցիկ գրաբարով, որը ոչ միայն գեղագիտական, այլև պատմագիտական և աղբյուրագիտական նշանա-

---

16 Տե՛ս նաև *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Գ, կազմեց՝ ***Օ. Եգանեան***, Երևան, 2007, էջ 807-812:

17 Այդ ժամանակ Օսմանյան բանակը Սուլթան Մեհմեդ IV-ի և մեծ վեզիր Ֆազլի Ահմեդ Քյոփրյուլուի գլխավորությամբ գրավեց ռազմավարական նշանակություն ունեցող Կամենեց-Պոդոլսկի ամրոցը՝ այն դարձնելով Օսմանյան Կայսրության Կամենեցյան էյալեթի կենտրոն։ Կամենեց-Պոդոլսկի ամրոցը մնաց Օսմանյան գերիշխանության ներքո շուրջ 27 տարի՝ մինչև 1699 թվականը, երբ Ռիսվիկի հաշտության պայմանագրով ամրոցը վերադարձվեց Լեհական թագավորությանը։ (**M. Wagner,** “The Sources on the Siege of Kamieniec Podolski in 1672”, *Historia i Świat*, No. 6, 2017, pp. 225–239. **D. Kołodziejczyk,** “Ottoman Podillja: The Eyalet of Kamjanec, 1672–1699”, *Harvard Ukrainian Studies*, Vol. 16, No. 1/2 (June 1992), pp. 87-101):

կություն ունի։ Այս հիշատակարանը զգալիորեն գերազանցում է նախորդ երկու հիշատակարանների ծավալը՝ դառնալով ինքնուրույն պատմական աղբյուր։

Հիշատակարանում մանրամասնորեն ներկայացված է Իսահակ վարդապետի կենսագրությունը՝ ներառյալ նրա ծագումը, կրթական ուղին, եկեղեցական գործունեությունը և հոգևոր առաքելությունը։ Բացի կենսագրականից, հիշատակարանում կան տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և եկեղեցական իրադարձությունների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ։ Մասնավորապես, արձանագրված են Ս. Թադեոս առաքյալի վանքում իրականացված շինարարական աշխատանքները։ Այս տեղեկությունները կարևոր են վանքի ճարտարապետական պատմության վերականգնման և վանական կյանքի ուսումնասիրության տեսանկյունից։ Հիշատակարանի միջոցով հնարավոր է վերակազմել ոչ միայն Իսահակ վարդապետի կերպարը, այլև ամբողջական պատկերացում կազմել Ս. Թադեոսի վանքի հոգևոր, մշակութային և քաղաքական դերակատարության մասին ԺԷ դարի երկրորդ կեսին։

Իսահակ վարդապետ Մակվեցին սերում էր քահանայական գերդաստանից, որի տոհմաբանական շղթան մանրամասնորեն շարադրված է հիշատակարանում։ Նա Սահակ քահանայի որդին էր, որի նախնին Արճեշից և Աղիովտից Ականց գյուղ տեղափոխված Թադեոսն էր։ Իսահակը թվարկում է իր նախնիների վեց սերունդների անունները՝ Սահակ, Մերտն, Քիչիմիր, Արայիշ, Հովհաննես, Թադեոս՝ ընդգծելով գերդաստանի շարունակականությունը և իր անմիջական կապը ոչ միայն ընտանիքի, այլև տոհմական ժառանգության հետ։ Նա գրում է. «Արդ, ես՝ տրուպս յամենայնի եւ վերջինս ի բանասիրաց, Իսահակ վարդապետս Մակուեցի, որդի Սահակ քահանայի, որդւոյ Մէրտնի, որդւոյ Քիչիմիրի, որդւոյ Արայիշի, որդւոյն Յոհանիսի, որդւոյ Թադէոսի, որ յԱկանց կոչեցելոյ գեղջէ, ի յԱրճիշոյ եւ յԱղիովտոյ եկեալ» (ՄՄ 808, 489ա)։ Իսահակի ինքնաներկայացումը՝ որպես «վերջինս ի բանասիրաց», ընդգծում է նրա գիտակցված դիրքորոշումը՝ որպես գերդաստանի գիտական և հոգևոր ժառանգության կրողի։

Հիշատակարանի հաջորդ հատվածում Իսահակը ներկայացնում է իր կրթական և եկեղեցական ուղին՝ ընդգծելով, որ ուսանել է Ս. Էջմիածնում՝ Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի հովանու ներքո, նրանից է ստացել քահանայական ձեռնադրություն, ապա վարդապետական գավազան և եպիսկոպոսական առաջնորդություն Ս. Թադեոս առաքյալի վանքում։ Նա գրում է. «Աշակերտ մեծափառ սրբազան հայրապետին՝ տեառն Յակոբայ կաթողիկոսի Ամենայն Հայոց յԱթոռն գերագահ Սուրբ Էջմիածնի, սնեալ եւ վարժեալ առ ոտս նորա՝ ի նոյն յոգնահանդէս Աթոռն, եւ ի նմանէ ձեռնադրեալ եւ առեալ զամենայն աստիճանս եկեղեցականս, թէ վարդապետական իշխանութիւն եւ գաւազան, եւ թէ եպիսկոպոսական առաջնորդութիւն Սուրբ Աթոռոյս Թադէոսի առաքելոյն» (ՄՄ 808, 489ա)։

Իսահակ Մակվեցին, ստանձնելով Ս. Թադեոսի առաջնորդությունը, շարունակել է Մկրտիչ եպիսկոպոսի սկսած վերակառուցման ավանդույթը: Մկրտիչ եպիսկոպոսը 1650-ական թվականներին իրականացրել էր լայնածավալ աշխատանքներ՝ վերականգնելով երկու կողմից մինչև հիմքերը քանդված եկեղեցին, նաև նորոգել էր սուրբ առաքյալի նահատակության վայրը և սուրբ Սանդուխտի սրբավայրը: Այս աշխատանքները կատարվել էին տեր Դանիելի և Բեստենց տեր Պետրոսի աջակցությամբ, որոնց Իսահակը հիշատակարանում կոչում է «քաջամարտիկ»՝ ընդգծելով նրանց անձնվեր ծառայությունը: Կարդում ենք. «Վերստին նորոգեաց եկեղեցի սուրբ առաքելոյն, որ քակեալ էր յերկուց կողմանց ի հիմանց, այլ եւ զդարպասն եւ զտեղին նահատակութեան սուրբ առաքելոյն եւ զսուրբ Սանդուխտն, հանդերձ գործակցութեամբ քաջամարտիկ տէր Դանիէլին եւ Բէստենց տէր Պետրոսին, որոց Տէր վարձահատոյց լիցի» (ՄՄ 808, 489ա):

1664 թվականին Իսահակ վարդապետը ձեռնամուխ է լինում վանքի պարիսպների և վանական խցերի կառուցմանը. «Իսկ ես ապիկարս Իսահակ վարդապետ, ի գալս իմ սկսայ շինել զպարիսպն եւ զխցերս...» (ՄՄ 808, 489ա): Այս տեղեկությունը հաստատվում է նաև ժամանակագրական աղբյուրով. «Թվին ՌՃԺԳ (1664) ... Սահակ վարդապետն եկն ի վանքն սուրբ Առաքելոյն Թադէոսի աւագ տօներին: Եւ գարունն սկսաք հիւսիսային կողմի պարիսպն շինել»[18]:

1676 թվականին՝ Իսահակ վարդապետ Մակվեցու առաջնորդության տասներեքերորդ տարում, Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու որոշմամբ Ս. Թադեոսի վանքում Իսահակի խնդրանքով նրա օգնական է նշանակվում Սարգիս Կաֆայեցին: Լինելով կրթված, գործուն և նախաձեռնող եկեղեցական գործիչ՝ նա անմիջապես ներգրավվում է վանքի վերանորոգման և կառուցապատման աշխատանքներում: Հիմնովին նորոգվում է եկեղեցին, ամուր որձաքարերով ընդլայնվում են պարիսպները, կառուցվում են աշտարակներ, դարպասներ, սենյակներ, տնտեսական և օժանդակ շինություններ: Վանքը ետ է գնում նաև այլազգիների գրաված վանքապատկան կալվածքները: Այդ մասին վկայում է Դիոնիսիոս Արեռպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» ձեռագրի հիշատակարանը, որ նույն թվականին օրինակվել է Սարգիս Կաֆայեցու պատվերով. «...Արդ, ստացօղ եղեւ նոր թարգմանեալ գրոցս Սարգիս վարդապետն Կաֆայեցի, որ էր առաջնորդ մեծ Աթոռոյն Թադէոսի սուրբ առաքելոյն, որ նորոգեաց զեկեղեցին ի հիմանէ և զպարիսպն ընդարձակեաց հաստահեղուս որձաքարամբք, բրգօք և դարպասօք, խցերօք և հիւրանոցօք և տնտեսանօք եւ այլ հարկաւոր շինուածովք: Այլ և զմուլքն վանիցս, զոր այլազգիքն տիրեալ էին, նոր յետ գնեաց և վախմ ետ սուրբ Աթոռոյս, ի հայրապետու-

---

[18] *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.*, հ. Ա, կազմեց՝ ***Վ. Հակոբյան***, 1951, Երևան, էջ 306:

թեանն Յակոբայ կաթողիկոսի, յԱթոռն Սուրբ Էջմիածնի և յարհիեպիսկոպոսութեան նահանգիս Իսահակ վարդապետի Մակուացւոյ և ի թագաւորութեանն Պարսից Շահ-Սուլէյման, և ի թվականիս մերում ՌՃԻԵ (1676) ամին» (ՄՄ 109, 405բ)[19]: Իսկ 1691 թվականին Նոր Ջուղայում ընդօրինակած Ավետարանի ստացող Ղազար վարդապետ Թավրիզեցին հիշատակում է Իսահակի և Սարգսի կատարած շինարարական գործերը, ընդ որում՝ Իսահակը այստեղ հիշվում է նաև որպես Թավրիզի և շրջակա գյուղերի արքեպիսկոպոս առաջնորդ. «Եղեւ ստացումն այս հոգեպատում բուրաստանի ի հայրապետութեան տեառն Եղիազարու, յԱթոռ Սուրբ Էջմիածնի եւ առաջնորդութեան Թավրիզու եւ բոլոր շրջակայ գեղօրէից՝ արքեպիսկոպոսի սրբոյ Աթոռոյ առաքելոյն Թադէոսի տեառն Իսահակայ աստուածաբան վարդապետի, որ մականուամբ Արդար վերայձայնի, եւ աշակերտի նորին՝ Սարգիս վարդապետի Կաֆայեցւոյ, որ է վերատեսուչ սրբոյ Աթոռոյ առաքելոյն Թադէոսի, որ ի հիմանէ նորոգեաց զեկեղեցին եւ զպարիսպն» (ՄՄ 247, 306բ)[20]: Իսահակ Մակվեցու և Սարգիս Կաֆայեցու համատեղ ջանքերով Ս. Թադեոսի տաճարի հիմնովին նորոգման աշխատանքները, ըստ 1684 թվականի վանքում նորոգված մի ճաշոցի հիշատակարանի, տևել են հինգ տարի. «Նորոգեաց ի հիմանց զտաճար սուրբ աթոռոյն առաքելոյն Թադէոսի, որ էր քակեալ եւ քայքայեալ: Յիշեցէք զԻսահակ եւ Սարգիս վարդապետսն, որ բազում աշխատութեամբ Ե. ամ հազիւ աւարտ հասուցին նորոգութիւն տաճարի դամբարանի սուրբ առաքելոյն Թադէոսի»[21]:

Իսահակի կարևորագույն նախաձեռնություններից էր Կառնուտի ջրատարի վերականգնումը՝ Սարգիս Կաֆայեցու հոգաբարձությամբ: Այս ջրատարը, որը կառուցել էր Մանուելի որդի Զաքարիա եպիսկոպոսը շուրջ 350 տարի առաջ՝ մոտ 1327 թվականին, ժամանակի ընթացքում քայքայվել էր, և միայն որոշ հատվածներում էին պահպանվել դրա հետքերը: Հիշատակարանում նշվում է. «ի թվականիս մերում ՌՃԻԶ (1677)-երորդի եղեւ գիւտ ջրմղին, որ ասի Կառնուտի, որ յառաջ ժամանակաւ բերեալ էր մեծն Զաքարիա եպիսկոպոսն՝ պարոն Մանուէլի որդի, երկրորդ անգամ ի հիմանէ շինօղ սուրբ եկեղեցւոյս, եւ էր քակտեալ եւ աւերեալ եւ հազիւ ուրեք ուրեք նշմարանք մնացեալ: Այլ այժմ շնորհօքն Աստուծոյ կրկին նորոգեցաւ եւ յորդաբուխ աղբիւրն բերեալ ածաւ ի մէջ վանիցս եւ գեղջս՝ հոգաբարձութեամբ Սարգիս վարդապետի Կաֆայեցւոյ» (ՄՄ 808, թ. 489ա):

Ջրատարի վերագործարկումը կարևոր նշանակություն է ունեցել ինչպես վանքի, այնպես էլ շրջակա գյուղի ջրամատակարարման համար: Հիշատակա-

---

19 Տե՛ս նաև *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Ա., կազմեցին՝ ***Օ. Եգանյան, Ա. Ջէյթունյան, Փ. Անթաբյան***, Երևան, 1984, էջ 462:

20 Նույն տեղում, էջ 1072:

21 **Հ. Ոսկեան,** *Վասպուրական-Վանի վանքերը*, Բ մաս, 1942, Վիեննա, էջ 485:

բանի վերջում Իսահակը դիմում է սերունդներին՝ հորդորելով պահպանել ջրատարը, հիշել բարերարներին և շարունակել հոգ տանել ջրատարի մասին՝ ընդգծելով դրա հասարակական և հոգևոր արժեքը. «Եւ խնդրեմ, զի ամ յամէ խնամատար լիջիք զի, մի իսպառ վնասեսցի եւ խանգարեսցի, քանզի յառաջին շինուածոյն մինչեւ ի մեզ իբրեւ ԳՃՌ (350) ամ անցեալ էր, եւ մեք նորոգեցաք: Դուք եւս մասնակից լիջիք բարեգործութեան վասն հասարակաց եւ սուրբ Աթոռոյս օգտին» (ՄՄ 808, թ. 489բ):

Իսահակ վարդապետ Մակվեցին հիշատակարանի վերջին հատվածում անդրադառնում է ԺԷ դարի երկրորդ կեսին Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շուրջ ծագած ներեկեղեցական հակամարտություններին: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է Օսմանյան և Սեֆյան տերությունների միջև մրցակցությամբ, որի հետևանքով Հայոց եկեղեցին հայտնվում էր բարդ քաղաքական իրավիճակում՝ ստիպված լինելով վարել զգուշավոր և բազմաշերտ դիվանագիտություն՝ պահպանելու իր ինքնավարությունը: Ներքին քաղաքական լարվածությունը, պայմանավորված ինչպես արտաքին ճնշումներով, այնպես էլ կաթողիկոսական աթոռի շուրջ ձևավորված իշխանական պայքարով, վտանգի տակ էր դնում Մայր Աթոռի կայունությունը:

Հիշատակարանում ներկայացվում է Եղիազար եպիսկոպոս Այնթապցու նախաձեռնությունը՝ էջմիածնից անկախ կաթողիկոսություն հիմնելու ուղղությամբ: Եղիազարը, որը նախկինում զբաղեցրել էր Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքական պաշտոնները, 1664 թվականին Բերիո Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում հրավիրում է եկեղեցական ժողով և ինքնահռչակվում է որպես կաթողիկոս[22]: Նա Երուսաղեմում հիմնում է «էջմիածին» մատուռը՝ որպես նոր աթոռի խորհրդանիշ[23]: Այս քայլը ուղղակիորեն սպառնում էր Ս. Էջմիածնի գերիշխանությանը և կարող էր հանգեցնել եկեղեցական պառակտման:

Հակոբ Դ Ջուղայեցին, որը հայտնի էր իր քաղաքական հեռատեսությամբ և դիվանագիտական ճկունությամբ, դիմում է Օսմանյան սուլթանին՝ ստանալու թագավորական հրովարտակ (խաթի շարիֆ), որով վերահաստատվում է Ս. Էջմիածնի գերիշխանությունը: Հիշատակարանում նշվում է. «...բազում հակառակութիւն կրեաց յապստամբաց Սուրբ Էջմիածնի, յորոց մի էր Եղիազար ոմն, որ ինքնագլուխ կաթողիկոս նստաւ եւ եհատ զՀոռոմոց երկիրն ի Սուրբ Էջմիածնայ: Իսկ մեծ հայրապետն Յակոբ կրկին մտանելով առ սուլթանն Հոռոմոց, եւ վերստին հաստատեաց զհոռոմաստուն Սուրբ Էջմիածնի՝ թագաւորական խաթի շարիֆով» (ՄՄ 808, թ. 489բ):

---

[22] **Մ. արք. Օրմանեան,** *Ազգապատում*, հ Բ, Ս.Էջմիածին, 2001, էջ 2962-2965:

[23] Նույն տեղում, էջ 2965:

Հակոբ Դ Ջուղայեցու այս քայլը կանխեց եկեղեցական պառակտման վտանգը և վերականգնեց Ս. Էջմիածնի դիրքը որպես Հայոց եկեղեցու կենտրոն: Իսահակ վարդապետ Մակվեցին, որպես ժամանակի ականատես, հիշատակարանում փաստագրում է այդ իրադարձությունները՝ ստեղծելով բացառիկ աղբյուր ԺԷ դարի եկեղեցական և քաղաքական իրադրության ուսումնասիրության համար:

1677 թվականի մի հիշատակարան վկայում է Իսահակի հասարակական գործունեության մասին: Այդ թվականին Հակոբ Դ Ջուղայեցու հրամանով Իսահակ վարդապետ Մակվեցին ուղարկվում է Բաղեշ՝ Ս. Էջմիածնի համար հանգանակություն իրականացնելու նպատակով: Այս առաքելությունը համընկնում է Մեսրոպ վարդապետ Բաղիշեցու աշակերտ Ներսես վարդապետ Հզվեցու գետում ջրահեղձ լինելու հետ: Նրա եղբայր մահտեսի Հովհաննեսը և Մեսրոպ վարդապետը, ի հիշատակ հանգուցյալի, Թադեոսի վանքին են ընծայում 1640 թվականին Տիգրանակերտում եղիազար գրչի ընդօրինակված Աստվածաշունչը, որի 451բ էջում Իսահակը թողնում է հիշատակարան. «Ի թվականի մերում ՌՃԻԶ (1677)-երորդի ամի, ես՝ Իսահակ վարդապետս Մակուեցի՝ աշակերտ տեառն Յակոբայ կաթողիկոսի, որոյ հրամանաւ գնացի ի Բաղէշ քաղաք վասն նուիրակութեան Սուրբ Էջմիածնի: Յայսմ ժամանակի Ներսէս վարդապետ ոմն Հզուեցի՝ աշակերտ հեզահոգի Մեսրոպ վարդապետի Բաղիշեցւոյ, գետամոյն եղեալ վաղճանեցաւ, իսկ եղբայր նորա՝ բարեպաշտօն մահդասի Յովհաննէսն եւ Մեսրոպ վարդապետն ընծայեցին զսուրբ Աստուածաշունս ի ձեռն մեր՝ ի դուռն սուրբ առաքելոյն Թադէոսի առաքելոյն՝ մնալ անտ յիշատակ յաւիտեան» (ՄՄ 187, էջ 451բ)[24]:

1677 թվականին նախքան Երուսաղեմ մեկնելը Հակոբ Դ Ջուղայեցին ձեռնադրում է Իսահակ Մակվեցուն եպիսկոպոս և նշանակում կաթողիկոսական տեղապահ. «Կաթուղիկոսն Յակոբ բերեալ զձեռնասուն աշակերտն իւր Իսահակ վարդապետ Մակուեցի, արար եպիսկոպոս, եւ եդ ի տեղի իւր աթոռակալ եւ տեղապահ. եւ ինքն ելեալ գնաց ի սուրբ Երուսաղէմ»[25]: Հակոբ Դ Ջուղայեցին նրան համարում էր կաթողիկոսական աթոռի հաջորդ արժանի թեկնածուն: Սակայն 1680 թվականին կաթողիկոսի մահից հետո մի շարք հանգամանքներ, մասնավորապես եկեղեցական վերնախավի որոշ շրջանակների բացասական արձագանքները, խոչընդոտեցին նրա ընտրությանը: Այս հակազդեցությունները, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էին Իսահակի՝ Հռոմի եկեղեցու հետ ունեցած կապով:

---

24 Տե՛ս նաև *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Ա., էջ 792:

25 **Ջաֆարեայ սարկաւագ**, *Պատմագրութիւն*, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 71-72: **Մ. արք. Օրմանյան**, *Ազգապատում*, հ. Բ, էջ 2974:

Իսահակ Մակվեցին վախճանվել է 1702 թվականին և ամփոփվել իր վերանորոգած Բագրևանդի եկեղեցու[26] *խորանի ձախակողմյան մասում. «Վաղճանեցաւ Իսահակ վարդապետն՝ առաջնորդ Սուրբ Առաքելոյն Թադէոսի, յուլիս ամսոյ ԺԳ (13), ի ծագիլ արշալուսին, օրն երկուշաբթի եւ թաղեցաւ ի ձախակողման խորանին ի վանս Սրբոյն Գրիգորի, որ մականուամբ Ուչքիլիսայ կոչի, որ եւ նորոգեաց կաթուղիկէն եւ զսալարկսն կտրին եւ զպարիսպն եւ զխցերն եւ զարդարեաց հոգեւոր կարգաւորութեամբ հոգեւորական»*[27]*: Իսահակ Մակվեցու մահվան մասին վկայող այս տեղեկությունը հաստատվում է նաև ժամանակագրական այլ աղբյուրներով*[28]*: Հուղարկավորությունը տեղի է ունեցել Վարդավառի տոնի հաջորդ երեքշաբթի օրը՝ հուլիսի 13-ին*[29]*: Իսահակ Մակվեցու աշակերտ Իգնատիոս Համթեցին մեծարման այսպիսի խոսք է գրում ուսուցչի մասին. «Այր մեծահամբաւ եւ խստակրօն, սքանչելի եւ հրաշագործ, որ ի թուին ՌՃԾԱ (1702) Աստուած փոխեցաւ, եւ կայ եդեալ յՈւչքիլիսէն ի յիւրում Աթոռին, ի ձախակողմ խորանին, եւ առնէ մեծամեծ սքանչելիք սուրբ գերեզման նորա, ի փառս Աստուծոյ եւ ի պարծանս քրիստոնէից»*[30]*:*

Ամփոփենք. Իսահակ վարդապետ Մակվեցին Հայ Առաքելական եկեղեցու ԺԷ դարի նշանավոր գործիչներից է, որի գործունեությունը համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Նրա նշանակումը Արտազի թեմի Ս. Թադեոսի վանքի առաջնորդի պաշտոնում Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու կողմից վկայում է վերջինիս բացառիկ վստահության և Մակվեցու բարձր հոգևոր հեղինակության մասին: «Արդար» մականունը, որով հիշատակվում է Իսահակը, բնութագրում է նրա բարոյական անբասիր, խստակրոն վարքը և ավանդական եկեղեցական արժեքների նկատմամբ անշեղ նվիրվածությունը:

Սույն ուսումնասիրությունը հիմնված է ձեռագրերի հիշատակարանների վրա, որոնք կարևոր աղբյուր են Իսահակ Մակվեցու բազմակողմանի գործունեության գնահատման և նրա կերպարի բացահայտման համար: Հիշատակարաններում Մակվեցին հանդես է գալիս ոչ միայն որպես հոգևոր առաջնորդ, այլ նաև որպես գրիչ և ձեռագրերի պատվիրատու: Հատկապես արժեքավոր է 1677 թվականի հիշատակարանը, որը բազմաշերտ աղբյուր է՝ միաժամանակ կենսագրական, պատմագիտական, աղբյուրագիտական և մշակութաբանական նշա-

---

26 *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.*, հ. Բ, էջ 414:

27 **Սամուել Անեցի եւ շարունակողներ,** *Ժամանակագրութիւն,* աշխատասիրութեամբ՝ ***Կ. Մաթեւոսյանի***, Երևան, 2014, էջ 349:

28 *Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.*, հ. Ա, 304, 311, 315, 328, հ. Բ, էջ 414, 420:

29 Նույն տեղում, էջ 304:

30 *Դիւան Հայոց պատմութեան*, գիրք Ժ՝ *Մանր մատենագիրք*, ԺԵ-ԺԹ դար, հրատարակեց՝ ***Գիւտ Աղանեանց***, Թիֆլիս, 1912, էջ 381:

նակությամբ: Այն մանրամասնորեն ներկայացնում է Մակվեցու կրթական ուղին, եկեղեցական գործունեությունը, ընդարձակ շինարարական և կազմակերպչական նախաձեռնությունները, ինչպես նաև ԺԷ դարի ներեկեղեցական հակամարտություններն ու քաղաքական իրադարձությունները: Իսահակ Մակվեցու նախաձեռնությամբ իրականացված շինարարական ծրագրերից առանձնանում է Կառնուտի ջրատարի կառուցումը, որը վկայում է նրա գործնական մոտեցման և համայնքային կյանքի բարելավման մասին:

Այս ամենը թույլ է տալիս դիտարկել Իսահակ Մակվեցուն ոչ միայն որպես Ս. Թադեոսի վանքի առաջնորդի, այլ որպես հայ հոգևոր մտքի և մշակույթի կարևորագույն ներկայացուցչի, որի գործունեությունը շարունակում է մնալ ուսումնասիրության և գնահատման արժանի:

TAMARA MINASYAN

ISAHAK VARDAPET MAKUETS‘I

Keywords: Saint Thaddeus Monastery, Yakob IV Jughayets‘i, Isahak Vardapet Makuets‘i, Artaz, Karnut water pipe, Sargis Vardapet Kafayets‘i.

Isahak Vardapet Makuets‘i was a prominent yet relatively understudied figure of the 17th century Armenian Apostolic Church. His appointment as abbot of the Saint Thaddeus Monastery in the Artaz Diocese by Catholicos of All Armenians Yakob IV Jughayets‘i reflects the latter’s exceptional trust and Isahak’s esteemed spiritual authority. Isahak’s epithet “The Just” highlights his morally impeccable lifestyle and unwavering dedication to traditional ecclesiastical values.

This study relies on manuscript colophons, which serve as essential sources for uncovering Isahak’s character and assessing the breadth of his activities. Within these colophons, Makuets‘i emerges not only as a spiritual leader but also as a scribe and commissioner of manuscript production. Particularly noteworthy is the colophon dated 1677, a multilayered source of biographical, historiographical, source-critical, and cultural significance. It offers a detailed account of Isahak’s educational background, ecclesiastical service, construction and organizational initiatives, as well as the intra-church conflicts and political developments of the 17th century.

Among the construction projects initiated by Isahak Makuets‘i, the Karnut water-pipe stands out as a testament to his practical mindset and commitment to enhancing communal life.

Taken together, these insights allow us to regard Isahak Makuets‘i not only as the abbot of the Saint Thaddeus Monastery, but also as a key representative of Armenian spiritual thought and culture, whose legacy remains deserving of continued scholarly attention and appreciation.

ТАМАРА МИНАСЯН

ВАРДАПЕТ ИСААК МАКВЕЦИ

Ключевые слова: Монастырь Святого Фаддея, Акоп IV Джугаеци, вардапет Исаак Маквеци, Артаз, Карнутский водопровод, Саркис вардапет Кафаеци.

Вардапет Исаак Маквеци – важная, но малоизученная фигура Армянской Апостольской Церкви XVII века. Назначение Исаака на должность настоятеля монастыря Святого Фаддея Артазской епархии Католикосом всех армян Акопом IV Джугаеци свидетельствует о высоком уровне доверии к нему. Прозвище «Праведный», под которым он упоминается в рукописных источниках, говорит о его нравственной безупречности и приверженности традиционным церковным ценностям. Представленное исследование основано на колофонах армянских рукописей, содержащих сведения о личности Исаака Маквеци и способствующих всесторонней оценке его деятельности. Маквеци был не только духовным лидером, но также писцом и заказчиком рукописей. Особую ценность представляет колофон 1677 года, содержащий сведения об образовательном пути Маквеци, его церковной службе, строительных и организационных инициативах, а также о внутрицерковных конфликтах и политических событиях эпохи.

Среди строительных проектов, реализованных по инициативе Маквеци и свидетельствующих о его практических навыках и стремлении к улучшению общественной жизни, выделяется Карнутский водопровод. Всесторонний анализ рукописных источников позволяет рассматривать Исаака Маквеци не только как настоятеля монастыря Святого Фаддея, но и как выдающегося представителя армянской духовной мысли и культуры, чье наследие заслуживает дальнейшего научного изучения и оценки.